

հիմնայատակ անկ: Ձէլալէտաին դիտմամբ թունաւորուած է, և Ուպէյտուլլահին հրահանգ է տրուել Մէքքէ կրթալու:»

«Քրդական միութիւնը» Սուլթան Համիտի դիւանագիտական մէկ խաղն էր. խկապէս եթէ նա «Քրդական միութիւն»ը կազմելու նպատակ ունենար, բնական էր որ պէտք է դիմէր Քիւրդ Աշիրաթապետներու, բայց այդ չորաւ, ու խաղը անյաջող անցնելուն պէս ալ չուտով ասպարէզէն վերցուց անոնց՝ որոնց գազափար էր ներշնչեր ու գործի մշեր:

Բայց գազափարը դրուելով, մնաց գազափար մը. և Պէտիրխանի որդիներէն մէկը այդ գազափարը ցեղային հողի վրայ դնելով, անցաւ Եգիպտոս և հրատարակեց մի թիւրթ «Քիւրդիստան» անունով:

Ներկայ Շէյխ Ապտիւլ-Կատիրը որ ուսումնասիրող մ'է և ունիլի առաջգիմական մտքերու հակումներ ցոյց կուտայ. համոզում ունի որ թիւրք պետութեան կազմութեան մէջ միայն Հայերու և Քիւրդերու իրերահասկացողութիւնն ու բարեկամութիւնն է որ կրնայ մշտապէս օգտակար լինել քիւրդերուն և հայերուն: Անոր կարծիքով ոչ մի առաջգիմական խաղաղ կեանք սպասելի չէ ոչ հայերէ և ոչ քիւրդերէ՝ եթէ անոնք սրտով չը բարեկամանան և իրենց միջի խնդիրները իրենք չը լուծեն, առանց նեղութիւնների ու բարդութիւնների ընծայելու պետութեան իրր բեռ:

Շէյխ Ապտիւլ-Կատիրը այսպիսի քանի մը նախնական քայլեր առած է. Մարտ 31 ըէաքսիօնի և Կիլիկիան ջարդերու օրերուն, հեռագրերով իր ազդեցութիւնը գործադրելով հայկական նահանգներու մէջ գտնուած քիւրդերուն վրայ որ խլրտումներ չ'առաջացնեն, և յաջողած է այդ ժամանակի համար:

Ձեռնարկած է Վանի մէջ համերաշխական ժողով գումարելով «Հողային հարց»ի լուծումի: Բայց «Հողային հարց»ը իր բազմակողմանի կնճռոտութիւններով չէր կրնար այդպիսի պարզ միջոցներով լուծուիլ: